## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N3

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38-5» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «21» 06 2018 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը (այսուհետև՝ Պատվիրատու), ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Ս. Մուրադյանի, մի կողմից, և «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ռ. Մայիլյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ «Կողմեր») կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2017 թվականի հուլիսի 19-ին կնքված պետության կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների պետական գնման N **«ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38-5»** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.4 կետը, ինչպես նաև համապատասխան համադրում կատարելու վերաբերյալ մասնագիտական եզրակացությունը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջը, որի հիման վրա հաշվի է առնվում ՀՀ կառավարության 2011 թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 60-րդ կետի 2)-րդ և 3)-րդ ենթակետերը՝ Պատվիրատուն և Կատարողը համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1.1 Պայմանագրի N 1 «Ծավալաթերթ-նախահաշիվ» հավելվածը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

**2. Համաձայնագրի գործողության ժամկետը**

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

### 3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են 4 (չորս) էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054,
հ/հ 900011012953
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում

Աշխատակազմի ղեկավար՝

______________ **Ս. Մուրադյան**
(ստորագրություն)

Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Հանրապետության 1նրբ. տ 8/Ա,
հեռ.՝ 093743040,
էլ. փոստ՝ artmashin@mail.ru
ՀՎՀՀ 02576479
հ/հ 2470100564110000
Արդշինբանկ ՓԲԸ

Տնօրեն՝

______________ **Ռ. Մայիսյան**
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված

«21» 06 2018թ. կնքված N 3 համաձայնագրի

Հավելված 1

«19» 07 2017թ. կնքված

N «ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38-5» ծածկագրով գնման պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

| ՀՀ Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքի Մեծամորի սրբարանների (թանգարանի շենք) ամրակայման, նորոգման և վերականգնման 2017թ. կատարվելիք աշխատանքներ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| N | Աշխատանքների տեսակները և անվանումը | Չ/Մ | Քանակ | Միավորի գին (հազար դրամ) | Ընդ. Արժեք (հազար դրամ) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | 1-2 Սրբարանների վերականգնողական աշխատանքներ | | | | |
| 1 | Սրբարանների պահպանված հատվածների մաքրում խոզանակով և վրձինով | դմ² | 1150,0 | 0,286 | 328,839 |
| 2 | Սրբարանների պահպանված հատվածների մշակում անտիսեպտիկ նյութերով | դմ² | 1150,0 | 0,593 | 682,230 |
| 3 | Վերակագնվող մակերեսներում պոլիէթիլենային ցանցի տեղադրում և կապակցում կավե շաղախով | դմ² | 167,0 | 0,889 | 148,410 |
| 4 | Վերականգնում թրծած կավե աղյուսով, կավե շաղախով և շամոտով | դմ³ | 331,0 | 2,893 | 957,563 |
| 5 | Սրբարանների պահպանված հատվածների չվերականգնվող մակերեսների մշակում հիդրավլիկ կրային բարդ շաղախով, ֆերզիտով և լիթոիդային ավազով, բնական պիգմենտների օգտագործմամբ | դմ² | 1150,0 | 1,396 | 1605,396 |
| 6 | Վերականգնվող հատվածների ծեփում նույն բաղադրիչներով ավելացնելուն մարմարի սպիտակ ավազափոշի | դմ² | 0,0 | 0,395 | 0,000 |
| 6* | Վերականգնվող հատվածների ծեփում նույն բաղադրիչներով | դմ² | 4860,0 | 0,369 | 1792,303 |
| 7 | Արևելյան պատի մաքրում խոնավ սպունգով | մ² | 18,00 | 4,078 | 73,402 |
| | 1-3 Ներքին հարդարման աշխատանքներ | | | | |
| 1 | Ներքին հարդարման աշխատանքները իրականացնելիս հատակը ծածկել պոլիէթիլենե թաղանթով | մ² | 132,30 | 0,496 | 65,595 |
| | *Դռներ և պատուհաններ* | | | | |
| 2" | Արտաքին ալյումինե վիտրաժ բացվող, առանց ջերմակամրջակի | մ² | 8,35 | 61,803 | 516,052 |
| | *Հատակներ* | | | | |
| 1 | Կարմիր բազալտե խիճ 50մմ հաստությամբ -82մ² | մ³ | 4,10 | 18,022 | 73,891 |
| | 1-5 Տանիքի իրականացման աշխատանքներ | | | | |
| 1' | Հին տանիքի վերանորոգում | մ² | 120,00 | 2,479 | 297,506 |
| 2' | Հին տանիքի ներկում | մ² | 128,00 | 1,570 | 200,915 |
| 3' | Նոր տանիքի իրականացում ցինկապատ թիթեղից 0.5մմ մետաղական կարվածքով | մ² | 34,00 | 7,662 | 260,494 |
| 4' | Հարթ թիթեղով տանիքի պատրաստում | մ² | 45,20 | 7,662 | 346,303 |
| 6' | Ուղղանկյուն խողովակներ 40*20*2մմ | գմ | 90,00 | 1,526 | 137,300 |
| 7' | Ուղղանկյուն խողովակներ 60*40*2մմ | գմ | 48,00 | 2,353 | 112,938 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8' | Խողովակ D=57մմ տրամագծով | մ | 12,00 | 4,347 | 52,164 |
| 9' | Շին. աղբի բարձում և տեղափոխում 5կմ հեռ.վրա | տ | 0,46 | 2,488 | 1,145 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **7 652,447** |

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքի Մեծամորի սրբարանների (թանգարանի շենքին հարակից) տարածքում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054,
h/h 900011012953
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում

Աշխատակազմի ղեկավար՝

_______________ **Ս. Մուրադյան**
(ստորագրություն)

Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Հանրապետության 1նրբ. տ 8/Ա,
հեռ.՝ 093743040,
էլ. փոստ՝ artmashin@mail.ru
ՀՎՀՀ 02576479
h/h 2470100564110000
Արդշինբանկ ՓԲԸ

Տնօրեն՝

_______________ **Ռ. Մայիլյան**
(ստորագրություն)

Կ.Տ